Կ-1321-15.04.2026-ՏՀ-011

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ներդրումային ֆոնդերի մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ենթաֆոնդ՝ միևնույն ֆոնդի կազմում առանձնացված ակտիվների համախումբ, որն ունի գործունեության միասնական կանոններ և ֆոնդի ակտիվների այլ համախմբերից տարբերվում է իր ներդրումային քաղաքականությամբ կամ եկամուտների բաշխման քաղաքականությամբ կամ ֆոնդի փայերի տեղաբաշխման (հետգնման) վճարներով կամ իր փայերի արժույթով կամ կառավարչի պարգևավճարով կամ դրանց համակցությամբ.»:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ոչ հրապարակային ֆոնդը կարող է ունենալ ոչ ավելի, քան 99 մասնակից: Մասնակիցների թիվը 99-ից անցնելու դեպքում ոչ հրապարակային ֆոնդը պարտավոր է 90 օրացուցային օրվա ընթացքում սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով վերագրանցվել որպես հրապարակային ֆոնդ կամ համապատասխանաբար կրճատել իր մասնակիցների թիվը: Սույն մասով սահմանված՝ որպես հրապարակային ֆոնդ վերագրանցվելու կամ մասնակիցների թիվը կրճատելու պահանջը չկատարման դեպքում ոչ հրապարակային ֆոնդը ենթակա է դատական կարգով լուծարման:»:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում «ակտիվների» բառը փոխարինել «ակտիվների կամ փայերի» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կ-1321-15.04.2026-ՏՀ-011/1~~0~~

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ներդրումային ֆոնդերի մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ենթաֆոնդ՝ միևնույն ֆոնդի կազմում առանձնացված ակտիվների համախումբ, որն ունի գործունեության միասնական կանոններ և ֆոնդի ակտիվների այլ համախմբերից տարբերվում է իր ներդրումային բաղաբականությամբ կամ եկամուտների բաշխման բաղաբականությամբ կամ ֆոնդի փայերի տեղաբաշխման (հետգնման) վճարներով կամ իր փայերի արժույթով կամ կառավարչի պարգևավճարով կամ դրանց համակցությամբ.»:

Հոդված 2~~1~~. ~~«Ներդրումային ֆոնդերի մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-245-Ն~~ Օ~~ө~~րենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ոչ հրապարակային ֆոնդը կարող է ունենալ ոչ ավելի, քան 99 մասնակից: Մասնակիցների թիվը 99-ից անցնելու դեպքում ոչ հրապարակային ֆոնդը պարտավոր է 90 օրացուցային օրվա ընթացքում սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով վերագրանցվել որպես հրապարակային ֆոնդ կամ համապատասխանաբար կրճատել իր մասնակիցների թիվը: Սույն մասով սահմանված՝ որպես հրապարակային ֆոնդ վերագրանցվելու կամ մասնակիցների թիվը կրճատելու պահանջը չկատարման դեպքում ոչ հրապարակային ֆոնդը ենթակա է դատական կարգով լուծարման:»:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում «ակտիվների» բառը փոխարինել «ակտիվների կամ փայերի» բառերով:

Հոդված 4~~2~~. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1321-15.04.2026-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառն առաջարկում ենք փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով՝ նկատի ունենալով, որ Նախագծով նախատեսվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում կատարել մեկից ավելի փոփոխություն:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծում առաջարկում ենք լրացնել նոր 1-ին հոդված՝ հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 1.** «Ներդրումային ֆոնդերի մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ենթաֆոնդ՝ միևնույն ֆոնդի կազմում առանձնացված ակտիվների	Ընդունվել է:	Ընդունվել է:

			համախումբ, որն ունի գործունեության միասնական կանոններ և ֆոնդի ակտիվների այլ համախմբերից տարբերվում է իր ներդրումային քաղաքականությամբ կամ եկամուտների բաշխման քաղաքականությամբ կամ ֆոնդի փայերի տեղաբաշխման (հետգնման) վճարներով կամ իր փայերի արժույթով կամ կառավարչի պարգևավճարով կամ դրանց համակցությամբ.»: Նշված առաջարկը պայմանավորված է հետևյալով. Միջազգային և տեղական փորձը ցույց է տալիս, որ ֆոնդի փայերի արժույթը սովորաբար ածանցվում է ֆոնդի ակտիվների արժույթից, իսկ փայերի դիմաց վճարումներն իրականացվում են փայի արժույթով:		
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածը առաջարկում ենք շարադրել որպես նախագծի 2-րդ հոդված՝ վերնագրից հանելով «Ներդրումային ֆոնդերի մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-245-Ն» բառերը: Նշված առաջարկը պայմանավորված է նրանով, որ նախագծում լրացվել է նոր 1-ին հոդված:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծում առաջարկում ենք լրացնել նոր 3-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ.	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում «ակտիվների» բառը փոխարինել «ակտիվների կամ փայերի» բառերով:»: Նշված առաջարկը պայմանավորված է հետևյալով. արտարժութային ռիսկերի կառավարման տեսանկյունից ավելի արդյունավետ է ենթաֆոնդերը տարբերակել ոչ միայն ակտիվների արժույթով, այլ նաև ֆոնդի փայերի: Առաջարկվող փոփոխությունների նպատակն է հնարավորություն տալ արտարժութային ակտիվներում ներդրումներ և զուտ ակտիվների հաշվարկ իրականացնելիս նվազեցնել արտարժութային ռիսկը թե՛ ներդրողների թե՛ ֆոնդերի համար:		
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը առաջարկում ենք շարադրել որպես նախագծի 4-րդ հոդված՝ հիմք ընդունելով առաջարկվող լրացումները:	Ընդունվել է:	Ընդունվել է: